ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՏՈՆՅԱՆ ԹԱՄԱՐԱ ԱՐԹՈՒՐԻ

ԷԴՎԱՐԴ ՕԼԲԻԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՆԵՐԸ

Ժ. 01. 07 - «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԿԱՐԻՆԵ ՀՐԱՉԻԿԻ ԳՈՒԼԱՆՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԳԱՅԱՆԵ ՎԻՈՒԼԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՔՐԻՍՏԻՆԵ ՀԵՆՐԻԿԻ ԲԵՋԱՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

Հայ- ռուսական (սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023թ. Հուլիսի 25-ին ժամը 14:30-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Արտասահմանյան գրականության 066 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ-ի Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի մասնաշենք, 422 լսարան:)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2023թ. հունիսի 16-ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա.Վ. Եգանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է XX դարի ամերիկյան թատերգության ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Էդվարդ Օլբիի (Edward Albee, 1928-2016) ստեղծագործական մեթոդի վերհանմանը հեղինակի՝ ստեղծագործական տարբեր փուլերի պիեսների տիպաբանական և համեմատական վերլուծության միջոցով, ինչը, մեր կարծիքով, կնպաստի ամերիկյան թատրոնի պատմության մեջ նրա դերի և նշանակության որոշմանը:

Գրական գործունեությունը Է.Օլբին սկսել է բանաստեղծություններից, սակայն հետագայում, այն ժամանակ արդեն հայտնի թատերագիր Թորնթոն Ուայլդերի առաջարկով, պիեսներ է գրել, որոնք մեծ հաջողություն չեն ունեցել, բայց մեկ տարի անց Է.Օլբիի միանգամից չորս պիեսները բեմ են բարձրանում Բեռլինում, Լոնդոնում և ԱՄՆ-ում: Այդ տարիներին քննադատները նրա պիեսներում տեսան Աբսուրդի թատրոնի ավանդույթներ՝ նրան դասելով այդ թատրոնի ավանդույթները կրող և շարունակողների շարքին:

Է.Օլբիի պիեսներում շատ են Աբսուրդի թատրոնի տարրերը, սակայն կարծում ենք՝ աբսուրդը դրանցում հանդես է գալիս որպես գեղարվեստական հնար: Իր ստեղծագործական ուղին սկսելով որպես Աբսուրդի թատրոնի հետևորդ՝ հետագա պիեսներում հեղինակը տուրք է տալիս ժամանակակից տարբեր ուղղությունների և հոսանքների բնորոշ տարրերին՝ այսպիսով ստեղծելով յուրօրինակ սինթեզ:

Ատենախոսության մեջ փորձ է արվում վերհանել Է.Օլբիի ստեղծագործական մեթոդը՝ հետևելով հեղինակի տարբեր շրջանների պիեսներում արտահայտված ստեղծագործական մեթոդի փոխակերպումներին: Այդ նպատակով առանձնացրել ենք հեղինակի տասը պիեսներ ստեղծագործական տարբեր շրջաններից, որոնցում մեր կարծիքով՝ առավել ակնառու են երևում Է.Օլբիի ստեղծագործական մեթոդի տրանսֆորմացիաները: Հիմնվելով հեղինակի ստեղծագործական

մեթոդի տրանսֆորմացիաների վրա՝ մենք մեզ թույլ ենք տվել առաջարկել նրա ստեղծագործական շրջանների բաժանման նոր տարբերակ: Հետևելով հեղինակի ստեղծագործական մեթոդի փոփոխությանը՝ մենք Է.Օլբիի ստեղծագործական ուղին բաժանում ենք ***երեք շրջանի*** (***1959-1980, 1981-1993, 1998-2007***)

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***արդիականությունը*** պայմանանավորված է նրանով, որ դրանում բացահայտվում է Է.Օլբիի յուրահատուկ տեղը ամերիկյան թատերգության զարգացման մեջ, այն է՝ հեղինակը սինթեզում է 20-րդ դարի ամերիկյան թատերգության հիմնական առանձնահատկությունները և միաժամանակ նախանշում նոր՝ պոստմոդեռնիստական թատերգության զարգացման հիմնական միտումները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության ուսումնասիրության ***առարկան*** Էդվարդ Օլբիի թատերգությունն է, գրողի ստեղծագործական ուղու ուսումնասիրության և տարբեր փուլերի վերլուծության միջոցով ***հեղինակի ստեղծագործական մեթոդի առանձնահատկությունների վերհանումը***:

Աշխատանքի ***նպատակն է***, հետևելով Է.Օլբիի տարբեր պիեսների առանձնահատկություններին, ներկայացնել ***հեղինակի ստեղծագործական մեթոդի տրանսֆորմացիաները***:

Ատենախոսության նպատակով են պայմանավորված հետևյալ գիտական ***խնդիրները***.

- վերհանել Է.Օլբիի առաջին շրջանի ստեղծագործական մեթոդի

առանձնահատկությունները՝ հիմնվելով տվյալ շրջանի պիեսների գեղագիտական սկզբունքների վերլուծության վրա

- հետևել ստեղծագործական մեթոդի փոխակերպմանը Է.Օլբիի երկրորդ շրջանի պիեսներում՝ վերհանելով դրանցում գերակայող հիմնական գեղագիտական սկզբունքներն ու ազդեցությունները
- վերհանել հեղինակի երրորդ շրջանում ստեղծագործական մեթոդի ձևավորումը պայմանավորող գեղագիտական սկզբունքները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության ***նորույթը*** կայանում է նրանում, որ հիմնվելով հեղինակի ստեղծագործական մեթոդի փոխակերպումների վրա՝ մենք մեզ թույլ ենք տվել առաջարկել նրա ստեղծագործական շրջանների բաժանման նոր տարբերակ: Ի տարբերություն գրականագիտության մեջ ընդունված կարծիքի՝ մենք ավելացնում են երկրորդ՝ անցումային շրջանը և վերանայում երրորդ շրջանի ստեղծագործական մեթոդը: Այսպիսով՝ մենք Է.Օլբիի ստեղծագործական ուղին բաժանում ենք ***երեք շրջանի*** (***1959-1980, 1981-1993, 1998-2007***), հիմնավորելով մեր բաժանումը այն պիեսների վերլուծությամբ, որոնք առավել ակնառու են ներկայացնում հեղինակի ստեղծագործական մեթոդի փոխակերպումները:

Առաջին շրջանը («Ինչ էր պատահել գազանանոցում» (1959), «Ամերիկյան երազանք» (1961), «Ով է վախենում Վըրջինիա Վուլֆից» (1962), «Նուրբ հավասարակշռություն» (1966)) համարում ենք հեղինակի ստեղծագործական փնտրտուքների շրջան, որտեղ նկատում ենք հիմնականում Աբսուրդի թատրոնի և ռեալիզմի սինթեզ:

Երկրորդ շրջանը («Լոլիտա» (1981), «Ամուսնական խաղ» (1987), «Երեք բարձրահասակ կանայք» (1991)) համարում ենք անցումային շրջան՝ Աբսուրդի թատրոնից՝ պոստմոդեռնիզմին:

Երրորդ շրջանն («Փոքրիկի մասին պիեսը» (1998), «Այծը, կամ ո՞վ է Սիլվիան» (2000), «Թը՛խկ, թը՛խկ: Ո՞վ կա այդտեղ:» (2003)) առանձնանում է հիմնականում պոստմոդեռնիստական պիեսներով, որոնցում Աբսուրդի թատրոնի տարրերը նվազագույնի են հասցված:

Հայ գրականագիտության մեջ սա Է.Օլբիին նվիրված առաջին ծավալուն հետազոտությունն է:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ- ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Աշխատանքի ***տեսական հիմք են*** հանդիսանում Աբսուրդի թատրոնի և պոստմոդեռնիզմի այնպիսի գրականագետների և տեսաբանների աշխատությունները, ինչպիսիք են՝ **Մարտին Էսլինը, Էժեն Իոնեսկոն, Դմիտրի Տոկարևը, Իհաբ Հասանը, Ռոլան Բարտը, Իլյա Իլյինը, Ումբերտո Էկոն** և այլք):

Մեթոդական հիմք են ծառայել համեմատական, համադրական, վերլուծական, որոշ դեպքերում՝ տիպաբանական մեթոդները:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության նյութերն ու արդյունքները կարող են կիրառվել ինչպես բուհական դասընթացների, հանրային դասախոսությունների ժամանակ, այնպես էլ հիմք դառնալ այլ հեղինակների թատերգությունների հետ համեմատական վերլուծությունները խորացնելու համար:

Ատենախոսությունը կարող է օգտակար լինել նաև 20-րդ դարի երկրորդ կեսի ամերիկյան թատրոնի և թատերգության զարգացման

միտումների վերաբերյալ պատկերացում կազմելու համար: Բացի այդ՝ կարող է պիտանի լինել թատերագիտությամբ զբաղվողների համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Աշխատանքը քննարկվել է Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի Համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնում և երաշխավորվել է պաշտպանության: Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հոդվածներում, միջազգային և միջբուհական գիտաժողովներում ունեցած զեկույցներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ***ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:***

Ներածության մեջ հիմնավորված են թեմայի ընտրությունը, նորույթն ու արդիականությունը, ներկայացված են հարցի պատմությունն ու Էդվարդ Օլբիի ստեղծագործական ուղին՝ ամերիկյան թատրոնի և թատերգության համատեքստում, ձևակերպված են ատենախոսության առարկան, նպատակն ու խնդիրները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱԲՍՈՒՐԴԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ՌԵԱԼԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՍԻՆԹԵԶԸ Է.ՕԼԲԻԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է Է.Օլբիի **առաջին շրջանի** պիեսներում հեղինակի ստեղծագործական մեթոդի ուսումնասիրությանը:

Է.Օլբիի պիեսների վերլուծության համար տեսական հիմք են հանդիսացել 20-րդ դարի տեսաբանների հիմնական դրույթները: Է.Օլբիի առաջին շրջանի պիեսները դիտարկվում են Աբսուրդի թատրոնի, ռեալիզմի համատեքստում, դրանցում նաև արդեն նկատվում են պոստմոդեռնիզմի տարրեր:

Առաջին գլխում հեղինակի ստեղծագործական մեթոդի առանձնահատկությունները վերհանելու համար վերլուծության են ենթարկվում առաջին շրջանում գրված «Ի՞նչ էր պատահել գազանանոցում» (1959), «Ամերիկյան երազանք» (1961), «Ո՞վ է վախենում Վըրջինիա Վուլֆից» (1962) և «Նուրբ հավասարակշռություն» (1966) պիեսները:

«Ի՞նչ էր պատահել գազանանոցում» պիեսում ***Աբսուրդի թատրոնի*** և ***ռեալիստական*** մեթոդների սինթեզ է: Հեղինակի այս պիեսում զգալի է ֆրանսիական Աբսուրդի թատրոնի ազդեցությունը, սակայն, ի տարբերություն այդ հոսանքին հատուկ դրամաների, որոնք բարձրացնում են համամարդկային, բոլոր ժամանակներում արդիական խնդիրներ, Է.Օլբիի Աբսուրդի թատրոնը անդրադառնում է լոկալ հասարակական խնդիրների (օրինակ, ամերիկյան հասարակության մասնատումը, «ամերիկյան երազանք» հասկացության կազմաքանդում, «ամերիկանիզմի» արժեքների քայքայումը), կոնկրետ նշում է գործողությունների վայրը (օրինակ, Նյու Յորքի Կենտրոնական այգի): Կարևոր է նշել, որ պիեսի գործողությունները կատարվում են ներկայում, ինչը համապատասխանում է ռեալիզմի գեղագիտությանը: Ի տարբերություն դասական Աբսուրդի թատրոնի պիեսների, որոնք զուրկ են սյուժեից, Է.Օլբիի պիեսներում կա տրամաբանական սյուժե:

«Ամերիկյան երազանք» պիեսում Է.Օլբին շարունակում է օգտագործել ***Աբսուրդի թատրոնի*** տարրերը՝ փորձելով սեփական մեկնաբանությունը տալ «ամերիկյան երազանք» երևույթին: Հեղինակի այս պիեսում առաջին անգամ հանդիպում են ***ինտերտեքստուալության*** որոշ օրինակներ, որոնք սակայն բավական չեն պիեսը պոստմոդեռնիստական համարելու համար:

Հեղինակը Տատիկի կերպարի մեջ միավորում է Շեքսպիրյան պիեսներից հայտնի խեղկատակին և 20-րդ դարում Թ.Ուայլդերի կողմից ներմուծած ռեժիսորի օգնականին՝ ցույց տալով, որ խեղկատակի կերպարի տրամաբանական զարգացումը տեսնում է ռեժիսորի օգնականի կերպարի մեջ: Պիեսում հանդիպող որդու կերպարը պատկանում է թատրոնում հայտնի՝ «անտեսանելի կերպարների» *(unseen character)* շարքին: Է.Օլբին պիեսում կատարում է նաև ***գրական ակնարկ***՝ Օ.Ուայլդի «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպին:

«Ո՞վ է վախենում Վրջինիա Վուլֆից» պիեսում Է.Օլբին շարունակում է ներկայացնել ***աբսուրդայնության հանգեցնող իրավիճակ***, դրան հատուկ ***լեզվական ճգնաժամի*** պատճառ հանդիսացող անտարամաբանական երկխոսություններով: Այս պիեսում Է.Օլբին շարունակում է օգտագործել ինտերտեքստուալ տարրեր, ավելանում է նաև Էդիպի մասին միթոսի և Էդիպյան բարդույթի ***դեկոնստրուկցիան***: Իր հերոսներին անվանելով հայտնի քաղաքական դեմքերի՝ Ջորջ և Մարթա Վաշինգթոնների, Նիկիտա Խրուշչյովի անուններով, Է.Օլբին ***շիզոանալիզի*** միջոցով կազմաքանդում է նրանց իմիջները:

«Նուրբ հավասարակշռություն» պիեսում գերակշռող են ռեալիստական տարրերը: Ի տարբերություն նախորդ պիեսների, «Նուրբ հավասարակշռություն» պիեսի հերոսներ Ագնեսն ու Թոբիասը իրատեսորեն են ներկայացվում, նրանք տիպական կերպարներ են: Պիեսի սյուժեն տրամաբանական է, առաջնային է դառնում սոցիալական համատեքստը: Հեղինակի այս ստեղծագործությունում ակնհայտ է Ա.Չեխովի «Բալենու այգին» պիեսի ազդեցությունը: Երկու պիեսները միավորում է նախկին կորսված արժեքների թախծոտ վերհուշի թեման: Նկատելի է նաև Բ.Բրեխտի ազդեցությունը: Թեև հեղինակը հիմնականում չի օգտվել Բ.Բրեխտի տեսական դրույթներից, սակայն «Նուրբ հավասարակշռություն» պիեսում առկա ժանրային փոփոխությունը՝ օպերային արիայի, մեր կարծիքով, Բ.Բրեխտի թատրոնի ազդեցությունն է:

Է.Օլբին որպես հեղինակային մեկնաբանության միջոց օգտագործել է նաև Բ.Բրեխտի «Էպիկական թատրոնին» հատուկ երաժշտական համարներ՝ զոնգեր,, որոնք ունեին երգիծական, քննադատական բնույթ:

Ռեալիստական մոտեցումը նկատվում է նաև Է.Օլբիի այս շրջանի պիեսներում առկա ***ընտանիքի որոշակի մոդելի*** վրա, որը կրում է ինքնակենսագրական բնույթ: Առաջին անգամ ընտանիքի այս մոդելին հանդիպում ենք «Ամերիկյան երազանք» պիեսում: Է.Օլբիի ընտանեկան զույգերում կինը միշտ ավելի ուժեղ է տղամարդուց: Բացի ընտանիքի հիմնական անդամներից, պիեսներում առկա է *ընտանիքի ևս մեկ անդամ*, սովորաբար՝ ամուսիններից մեկի քույրը կամ մայրը, որին ազգականները ներկայացնում են որպես խենթ, լուրջ չեն վերաբերվում: Սակայն, նա ընտանիքի ամենախելացի անդամն է և տեսնում է իրական պատկերը ցնորքի շղարշից այն կողմ: Պիեսներում կարևոր դեր է խաղում նաև որդու կերպարը, որի բացահայտումը կապված է որևէ ***առեղծվածի*** հետ: «Ամերիկյան երազանք» պիեսում դա որդեգրված և խոշտանգված որդին ու նրա երկվորյակ եղբայրն են: «Ո՞վ է վախենում Վըրջինիա Վուլֆից» պիեսում որդին դառնում է երևակայական, իսկ «Նուրբ հավասարակշռություն» պիեսում մահանում է:

Այսպիսով՝ առաջին շրջանում**,** որը մենք համարում ենք հեղինակի ստեղծագործական փնտրտուքների շրջան, Է.Օլբին սինթեզում է Աբսուրդի թատրոնի և ռեալիզմի տարրերը: Թեև վերոնշյալ գեղագիտական սկզբունքները այս շրջանում գերակայում են, հեղինակը չի սահմանափակվում միայն դրանց գործածությամբ, նրա պիեսներում արդեն նշմարվում են պոստմոդեռնիստական տարրեր:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱԲՍՈՒՐԴԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՍԻՆԹԵԶԸ Է.ՕԼԲԻԻ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է հեղինակի ***երկրորդ շրջանի (1981-1993)*** առանձնահատկությունների վերհանմանը: Այս շրջանում նա սինթեզում է Աբսուրդի թատրոնի և պոստմոդեռնիզմի գեղագիտական սկզբունքները: Այս շրջանից վերլուծության համար ընտրել ենք երեքը՝ *«Լոլիտա»* (1981), *«Ամուսնական խաղ»* (1987) և *«Երեք բարձրահասակ կանայք»* (1991) պիեսները:

Է.Օլբիի ***«Լոլիտա»*** պիեսը Վ.Նաբոկովի նույնանուն վեպի ադապտացված տարբերակն է, որում թատերագիրը անհամեմատ կրճատում է սյուժեն, սակայն ավելացնում Հեղինակի կերպարը: Այս կերպարի մեջ Է.Օլբին պատկերել է ոչ միայն Վ.Նաբոկովին, այլ նաև ինքն իրեն, իսկ Հեղինակի և Համբերտի տեսակետների հակադրության միջոցով Է.Օլբին կտրուկ քննադատության է ենթարկում Համբերտին՝ միևնույն ժամանակ թույլ տալով նրան արդարանալ: Այս երկխոսությունները նաև պոստմոդեռնիստական ***ինքնահեգնանքի*** վառ օրինակներ են: Ողջ պիեսը կառուցված է հերոս-հեղինակ երկխոսության վրա, որը տեքստաստեղծման գործընթացի վրա լույս սփռելու փորձ է: Հեղինակի կերպարը պիեսում կատարում է ռեժիսորի օգնականի դեր, կապ հաստատում Համբերտի և հանդիսատեսի միջև, լույս սփռում որոշ իրադարձությունների վրա:

«Ամուսնական խաղ» պիեսում հեղինակը ներկայացնում է անտրամաբանական երկխոսություններով ***աբսուրդայնության*** հասնող իրավիճակ, սակայն առաջին անգամ կիրառում պոստմոդեռնիզմին հատուկ ***պաստիշ***, որը ձևավորվում է Աբսուրդի թատրոնի և ռեալիստական հերոսների հակադրությամբ՝ ստեղծելով որոշակի

պաստիշ: Օգտվելով պաստիշի և Ու.Էկոյի առաջադրած ***«կրկնակի կոդավորման»***[1] հնարից՝ Է.Օլբին միախառնում է հայտնի հեղինակների ոճերը՝ ստեղծելով յուրահատուկ ինտերտեքստ: Հեղինակը նաև օգտագործում է ***ինքնահեգնանք***՝ Ջիլիանի միջոցով կրկնօրինակում այլ հեղինակների, իսկ Ջեքի միջոցով ծաղրում ինքն իրեն:

«Երեք բարձրահասակ կանայք» պիեսում Է.Օլբին ***ֆրագմենտարության*** միջոցով ներկայացնում է միևնույն կնոջ տարբեր տարիքները՝ նրա կյանքի տարբեր դրվագները: Է.Օլբին պիեսում սինթեզում է ռոմանտիկական, ռեալիստական և Աբսուրդի թատրոնի սկզբունքները, պոստմոդեռնիզմի համատեքստում՝ դրվագների միջոցով ցույց տալիս յուրաքանչյուր հերոսի տեսակետն ու գործելաոճը: Այս պիեսում հեղինակը կատարում է նաև ժանրային փոփոխություն՝ տուրք տալով ***հոգեբանական դրամայի*** ավանդույթներին:

Գեղագիտական սկզբունքների այս սինթեզը փաստում է հեղինակի՝ ստեղծագործական երկրորդ՝ անցումային շրջանում տարբեր ոճերի, մեթոդների, ժանրերի միախառնման մասին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Է.ՕԼԲԻԻ ԵՐՐՈՐԴ՝ ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է Է.Օլբիի ***երրորդ շրջանի (1998-2007)*** պիեսներում արտացոլված ստեղծագործական մեթոդի առանձնահատկությունների վերհանմանը: Այս շրջանում Աբսուրդի թատրոնի տարրերը պակասում են՝ իրենց տեղը զիջելով պոստմոդեռնիզմին: Պոստմոդեռնիստական գեղագիտության շուրջ

[1]Eco U. On Literature. Vintage publishing. 2006. p. 215.

բնորոշումներում կարևորվում են Ի.Հասանի, Ռ.Բարտի, Ու.Էկոյի և այլոց դասակարգումներն ու բնորոշումները:

Այս շրջանից ընտրել ենք երեք ստեղծագործություններ՝ *«Փոքրիկի մասին պիեսը»* (1998), *«Այծը, կամ ո՞վ է Միլվիան»* (2000) և *«Թը՛խկ, թը՛խկ: Ո՞վ կա այդտեղ:»* (2003):

«Փոքրիկի մասին պիեսը»-ի մեջ պոստոդեռնիստական տարրերը սինթեզվում են վոդևիլի ավադույթների հետ: Պիեսում առկա են մի շարք գրական ակնարկներ՝ աստվածաշնչյան պատումներին, հին հունական միթոսներին, եգիպտական դիցաբանությանը, Մ.Պրուստի «Կորուսյալ ժամանակի որոնումներում» վիպաշարին, մենք փորձ ենք կատարում պիեսը ներկայացնել Գեղանկարչի մասին ստեղծագործությունների համատեքստում: Հեղինակը դիմում է նաև պատմական անեկդոտին, իսկ պիեսում հանդիպող մի շարք մշակութային հղումները առավել հետաքրքրացնում են դրա մեկնաբանումը փորձված ընթեցողի համար:

«Այծը, կամ ո՞վ է Միլվիան» պիեսում Է.Օլբին անդրադառնում է «ողբերգական» հասկացության ժամանակակից սահմանմանը, ***դեկոնստրուկցիայի*** է ենթարկում անտիկ ողբերգության՝ Բաքոսուհիների և Դիոնիսոսի մասին միթոսները՝ բարձրացնելով 21-րդ դարում ողբերգության նշանակության վերաբերյալ մի շարք կարևոր խնդիրներ: Պիեսում հեղինակը որպես ***մետատեքստ*** է օգտագործում նաև Արիստոտելի «Պոետիկա» աշխատությունն ու Սոֆոկլեսի «Էդիպ արքա» ողբերգությունը, որոնք նա կազմաքանդում է՝ ներկայացնելով ժամանակակից թատրոնի էկլեկտիկությունը: Պիեսում հեղինակը անդրադառնում է մի շարք հասարակական խնդիրների, հակադրելով նույնասեռականությունը, անասնապղծությունը և ինցեստը, ներկայացնում է այն խնդիրները, որոնք իր կարծիքով, իրապես «ողբերգական» են 21-րդ դարում:

«Թը՛խկ: Թը՛խկ: Ո՞վ կա այդտեղ:» պիեսը հեղինակի ամենափորձարարական ստեղծագործությունն է, այն պիես է առանց հերոսի, որը քանդում է դասական և 20-րդ դարի թատերգության

կառուցվածքը և սյուժեն: Պիեսն ամբողջությամբ պոստմոդեռնիստական է, քանի որ ութ տողից բաղկացած այս երկում Է.Օլբին ***կազմաքանդում է*** ոչ միայն դասական թատերգության կառուցվածքը, այլ նաև Աբսուրդի հակադրամաների կառուցվածքը. թեև դրանք նույնպես զուրկ են սյուժեից, սակայն բեմում ինչ-որ գործողություն, այնուամենայնիվ, կատարվում է: Հեղինակի այս պիեսում բեմը ամբողջությամբ դատարկ է, չի կատարվում ոչ մի գործողություն: Ներկայացումը զուրկ է նաև դերասանից, քանի որ միայն ետնաբեմում է լսվում հերոսի ձայնը, որը կարող է լինել ձայնագրված: Այս պիեսում հեղինակն օգտագործում է պոստմոդեռնիստական հնարները՝ ***խաղը ընթեցողի/ հանդիսատեսի հետ*** և ***էպատաժը***:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էդվարդ Օլբիի ստեղծագործությունների ուսումնասիրության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացություններին՝

1. Հետևելով Է.Օլբիի դրամատուրգիայիում արտահայտվող ստեղծագործական մեթոդի զարգացմանն ու փոխակերպումներին՝ մենք այն սահմանում ենք որպես ***սինթետիկ***:

2. Է.Օլբիի ստեղծագործական մեթոդը զարգացել և փոխակերպվել է եվրոպական և ամերիկյան թատերգության հիմնական գեղագիտական միտումների, ինչպես նաև աշխարհում տիրող սոցիալ-քաղաքական իրավիճակի զարգացմանը համապատասխան: Հետևելով թատերագրի ստեղծագործական մեթոդում այս կամ այն գեղագիտական սկզբունքի գերակայությանը՝ մենք մեզ թույլ ենք տվել նրա ստեղծագործական ուղին բաժանել ***երեք շրջանների***:

3. ***Առաջին շրջանում (1959-1980)*** Է.Օլբին միախառնում է Աբսուրդի թատրոնի և ռեալիզմի գեղագիտական սկզբունքները:

- Այս շրջանի պիեսներում (*«Ի՞նչ էր պատահել զազանանոցում» (1959), «Ամերիկյան երազանք» (1961), «Ո՞վ է վախենում Վրջինիա Վուլֆից» (1962))* գերակայում են Աբսուրդի թատրոնին բնորոշ առանձնահատկությունները. հեղինակը ներկայացնում է ***աբսուրդայնության հանգեցնող իրավիճակներ՝*** դրանք համեմելով ***լեզվական ճգնաժամի*** պատճառ հանդիսացող անտրամաբանական երկխոսություններով:
- *«Նուրբ հավասարակշռություն» (1966)* պիեսում գերակշռող են ռեալիստական տարրերը: Առաջնային է դառնում սոցիալական համատեքստը, ներկայացված է տրամաբանական սյուժե և տիպական կերպարներ:
- Է.Օլբիի վաղ շրջանի ստեղծագործություններում մեթոդը, այնուամենայնիվ, չի սահմանափակվում վերը նշված գեղագիտական սկզբունքների օգտագործմամբ, այլ ընդգրկում է նաև էկզիստենցիալիստական տարրեր (գոյության խնդիր, ընտրության հնարավորություն), ինչպես նաև հեղինակի պիեսներում արդեն նշմարվում են պոստմոդեռնիստական տարրեր (ինտերտեքստուալություն, դեկոնստուկցիա):

*4. **Երկրորդ շրջանում (1981-1993)*** Է.Օլբին գրեթե հրաժարվում է ռեալիզմի սկզբունքներից, սակայն հավատարիմ մնում Աբսուրդի թատրոնի գեղագիտական սկզբունքներին: Միևնույն

ժամանակ այս շրջանի պիեսներում ուժեղանում են պոստմոդեռնիզմի տարրերը:

- Այս շրջանի բոլոր պիեսներում (*«Լոլիտա» 1981, «Ամուսնական խաղ» 1987, «Երեք բարձրահասակ կանայք» 1991*) հեղինակը պահպանում է անտրամաբանական երկխոսություններով աբսուրդայնության հասնող իրավիճակները, սակայն ավելացնում պոստմոդեռնիզմին բնորոշ տարրեր՝ ***ինքնահեգնանք*** (*«Լոլիտա» 1981, «Ամուսնական խաղ» 1987),* ***ֆրագմենտարություն*** *(«Երեք բարձրահասակ կանայք» 1991),* ***պաստիշ*** *(«Ամուսնական խաղ» 1987):*

5. ***Երրորդ շրջանը (1998-2007)*** բնորոշում ենք որպես պոստմոդեռնիստական: Թեև այս շրջանի պիեսներում հեղինակն օգտագործում է պոստմոդեռնիստական գեղագիտության բոլոր հիմնական տարրերն ու հնարները, ավելանում և առավել ակնհայտ են դառնում ***դեկոնստրուկցիան***, ***խաղն ընթերցողի հետ*** և ***էպատաժը***:

- *«Փոքրիկի մասին պիեսը» (1998)* ստեղծագործության մեջ հեղինակը սինթեզում է պոստմոդեռնիստական տարրերը ***վոդևիլի*** ավանդույթների հետ:
- *«Այծը, կամ ո՞վ է Սիլվիան» (2000)* պիեսում Է.Օլբին ***դեկոնստրուկցիայի*** միջոցով քանդում է ողբերգության ժանրի և ողբերգականի մասին դասական պատկերացումները ժամանակակից աշխարհում:
- *«Թը՛խկ, թը՛խկ: Ո՞վ կա այդտեղ:» (2003)* պիեսում հեղինակը օգտագործում է պոստմոդեռնիստական թատրոնի հնարները՝ ***խաղը ընթերցողի հետ*** և ***էպատաժը***: Պիեսը, որի ժանրը մենք սահմանում ենք որպես «թատրոն առանց դերասանի» հաստատում է

Է.Օլբիի դերը ժամանակակից փորձարարական թատրոնի զարգացման գործում:

- Հեղինակի ստեղծագործությունների այս շրջանի ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ Աբսուրդի թատրոնի տրամաբանական զարգացումը Է.Օլբին տեսնում է պոստմոդեռնիստական թատրոնի մեջ, որտեղ աբսուրդը դառնում է դրա հատկանիշներից մեկը:

6. Այսպիսով՝ ուսումնասիրելով Է.Օլբիի ստեղծագործական երեք շրջանները, կարող ենք փաստել, որ հեղինակը սինթեզում է տարբեր գեղարվեստական մեթոդների տարրեր՝ ժանրերի, գրական հնարների, կերպարների մակարդակների վրա: Սա մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ հեղինակը սինթեզում է 20-րդ դարի դրամայի հիմնական առանձնահատկությունները և նախանշում ամերիկյան թատրոնի և թատրարվեստի հետագա զարգացման ուղիները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ

1. Է.Օլբիի ուշ շրջանի թատերգության առանձնահատկությունները // «Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր.. Լուսաբաց հրատարակչություն. Երևան. 2014.
2. Գրական ալյուզիաները Էդվարդ Օլբիի «Ամերիկյան երազանք» պիեսում // «Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր. Լինգվա հրատարակչություն. Երևան. 2015.
3. Ընտանիքի մոդելը Է.Օլբիի վաղ շրջանի պիեսներում // «Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր. Լինգվա հրատարակչություն. Երևան. 2016.

4. Անտիկ սյուժեի մեկնաբանությունը Է.Օլբիի «Այծը, կամ ո՞վ է Սիլվիան» պիեսում // Բանբեր. բանասիրություն/ լեզվաբանություն. Լինգվա հրատարակչություն. Երևան. 2016.
5. Պոստմոդեռնիստական գեղագիտության տարրերը Է.Օլբիի «Ամուսնական խաղ» պիեսում // «Գրականության արդի հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր. Պրակ Է. Լինգվա հրատարակչություն. Երևան. 2016.
6. Հեղինակի կերպարը Էդվարդ Օլբիի «Լոլիտա» պիեսում // Բանբեր. բանասիրություն/ լեզվաբանություն. Լինգվա հրատարակչություն. Երևան. 2017.
7. Էդվարդ Օլբիի «Ով է վախենում Վըրջինիա Վուլֆից» պիեսը պոստմոդեռնիզմի համատեքստում // Բանբեր. բանասիրություն/ լեզվաբանություն. Լինգվա հրատարակչություն. Երևան. 2017.
8. Էդվարդ Օլբիի «Թը՛խկ: Թը՛խկ: Ո՞վ կա այդտեղ» պիեսի ժանրային առանձնահատկությունները // Բանբեր. բանասիրություն/ լեզվաբանություն. Լինգվա հրատարակչություն. Երևան. 2017.
9. Samuel Beckett’s Tradition in Edward Albee’s plays (On The Example of “The Zoo Story” and “Marriage Play”). // Инновационное развитие. Международный научный журнал. Е-Принт. г. Пермь. 2017.
10. Էդվարդ Օլբիի «Փոքրիկի մասին պիեսը» պոստմոդեռնիզմի համատեքստում // Բանբեր. բանասիրություն/ լեզվաբանություն. Լինգվա հրատարակչություն. Երևան. 2018.

АНТОНЯН ТАМАРА АРТУРОВНА

ТРАНСФОРМАЦИИ ТВОРЧЕСКОГО МЕТОДА ЭДВАРДА ОЛБИ

Защита диссертации на соискание ученой степени кандидата филологических наук состоится 25.07.2023 года в 14:30 на заседании специализированного совета 066 ВАК (“Зарубежная литература”), действующего в Ереванском государственном университете, по адресу г. Ереван, ул. А. Манукяна 1 (7-й корпус ЕГУ, факультет Европейских языков и коммуникации, аудитория 422).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена выявлению особенностей и трансформаций творческого метода одного из крупнейших американских драматургов 20-го века Эдварда Олби (1928-2016). Используются типологический и сравнительный анализ пьес разных творческих этапов автора, что, несомненно, спосспособствует определению его роли и значения в истории американского театра. ***Актуальность*** работы обусловлена выявлением роли Олби в развитии американского театра. Драматург синтезирует основные черты американского театра 20-го века и в то же время намечает основные тенденции развития нового, постмодернистского театра. ***Цель*** работы заключается в исследовании трансформаций творческого метода Эдварда Олби путем на примере пьес автора разных лет.

Новизна нашей работы, которая является первым в армянском литературоведении развернутым исследованием, посвященным творчеству Олби, мы позволяем себе предложить нашу собственную периодизацию пьес автора. Мы разделяем творчество Эдварда Олби на ***три периода (1959-1980, 1981-1993, 1998-2007)*** основываясь на анализе пьес, наиболее ярко характеризующих виды трансформаций творческого метода автора.

Диссертация состоит из **Введения, трех глав, Заключения и Списка использованной литературы.**

Во **Введении** обосновывается выбор темы, новизна, и актуальность, представлена история вопроса и творческий путь Эдварда Олби в контексте американского театра 20-го века, сформулированы цели и задачи диссертации.

Первая глава диссертации ***«Синтез эстетических принципов театра абсурда и реализма в первом творческом периоде Эдварда Олби»*** посвящена исследованию особенностей четырех пьес первого творческого периода*(«Что случилось в зоопарке?» 1959, «Американская мечта» 1961, «Кто боится Вирджинии Вульф?» 1962, «Хрупкий баланс» 1966*) и выявлению основных тенденций эволюции творческого метода Олби. В этой главе также анализируются основные положения теории театра абсурда на основе которых формируется и эволюционирует авторское мировоззрение в первом периоде творчества.

Вторая глава диссертации ***«Синтез эстетических принципов Театра Абсурда и постмодерниза во втором творческом периоде Эдварда Олби»*** посвящена исследованию особенностей трех пьес второго творческого периода автора *(«Лолита» 1981, «Брачный этюд» 1987, «Три высокие женщины» 1991*). Мы прослеживаем трансформацию творческого метода Олби во втором периоде. Здесь автор почти отказывается от принципов реализма, но остается верен эстетичским принципам театра абсурда. Одновременно в пьесах этого периода усиливаются элементы постмодернизма (*самоирония, фрагментарность, пастиш*).

Третья глава дисертации ***«Особенности третьего- постмодернистского периода творчества Эдварда Олби»*** посвящена выявлению особенностей постмодернизма в трех пьесах третьего творческого периода Олби *(«Пьеса про младенца» 1998, «Коза, или кто такая Сильвия?» 2000, «Тук! Тук! Кто там?» 2003*). Хотя в пьесах этого периода автор использует все основные элементы и

приемы постмодернистской эстетики, более очевидны **эпатаж, игра с читателем и деконструкция**.

В **Заключении** диссертации обобщаются итоги проведенного исследования. В конце работы приведен полный **Список** использованных источников.

TAMARA ANTONYAN

THE TRANSFORMATIONS OF EDWARD ALBEE'S CREATIVE METHOD

The defense of the dissertation will take place on 25.07.2023 at the HQC of RA's specialized council 066 of "Foreign Literature" in Yerevan State University (address: Yerevan, Aleq Manukyan str. 1, YSU, 7th building, Faculty of European Languages and Communication, room 422).

SUMMARY

The dissertation is dedicated to the study of the creative method of Edward Albee, one of the most prominent 20th century American playwrights. The ***actuality*** of the work lies in distinguishing the unique role that Albee has played in the development of the 20th century American drama, i.e. the author has synthesized the main features of the 20th century American theater and at the same time has outlined the main trends in the development of the new, postmodernistic theater. The ***subject*** of the dissertation concerns the distinguishment of Edward Albee's creative method through the study of plays from different periods of the playwright's literary way. The ***aim*** of the work is to study the transformations of Edward Albee's creative method through the analysis of the peculiarities of his plays.

The novelty of our dissertation lies in the fact that, based on the transformations of the playwright's creative method, we propose a new way of periodization of his works. Particularly, we have divided Albee's works into ***three periods (1959-1980, 1981-1993, 1998-2007).***

The dissertation consists of introduction, three chapers, conclusion and bibliography.

In the Introduction the choice of the topic, scientific novelty and actuality are presented, the aim and objectives of the study are formulated, the critical

literature on Albee's works is summarized and the playwright's literary way is considered in the context of the 20th century American theater.

The first chapter of the dissertation, titled ***"The synthesis of the aesthetic principles of the Theater of the Absurd and Realism in the first period of Edward Albee's literary way"*** is dedicated to the distinguishment of the main trends of the evolution of Albee's creative method through the study of the peculiarities of four plays from the first period of playwright's works *("The Zoo Story" 1959, "The American Dream" 1961, "Who's Afraid of Virginia Woolf?" 1962, "A Delicate Balance" 1966*). This chapter also analyzes the main provisions of the theory of The Theater of the Absurd which inspired and formed Albee's worldview in the first period.

The second chapter of the dissertation, titled ***"The synthesis of the aesthetic principles of the Theater of the Absurd and Postmodernism in the second period of Edward Albee's literary way"*** is dedicated to the tracing of the transformations of Albee's creative method through the study of the peculiarities of three plays from the second period of playwright's works *("Lolita" 1981, "Marriage Play" 1987, "Three Tall Women" 1991*). In this period, Albee almost abandons the principles of Realism but remains faithful to the aesthetic principles of the Theatre of the Absurd. The elements of Postmodernism are strengthened in the plays of this period (*self-parody, fragmentation, pastiche*).

The third chapter of the dissertation, titled ***"The peculiarities of the third, postmodernistic period of Edward Albee's literary way"*** is dedicated to the study of the elements of postmodernism in the three plays of the third period of the playwright's works *("The Play About the Baby" 1998, "The Goat, or Who's Sylvia?" 2000, "Knock! Knock! Who's there?" 2003*). Although the author uses all the main elements of the postmodernistic aestethics in the plays of this period, *deconstruction*, *playfulness* and *epitaph* are worthy of a special mention.

In the **Conclusion** the main outcomes of the research are presented. In the end

of the dissertation the list of **literary and critical sources** used is presented.